ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2024/105

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ապրիլի 2024 թ. N 105

ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «**Արարատի պետական բժշկական քոլեջ**» ՊՈԱԿ
Գործունեության հասցեն՝ ՀՀ, Արարատի մարզ, ք.Արարատ, Խանջյան 63
Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ **չի ունեցել**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2024թ. ապրիլի 27-ին քննարկեց «**Արարատի պետական բժշկական քոլեջ**» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԱՊԲՔ, քոլեջ, ՄՈՒՀ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	**13 հունվարի 2023 թ.**
ինքնավերլուծության ներկայացում	10 մայիսի.2023թ
փորձագիտական այցի իրականացում	31.10-03.11.2023 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	01 դեկտեմբերի 2023 թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում	09 փետրվարի 2024թ.

Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:
Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 3-ը՝ **«Կառավարում ու վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում»** և **«Որակի ներքին ապահովման համակարգ»** գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով «Արարատի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի համաձայնությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների նախնական ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. ***Հաստատությունը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում***

ԱՊԲՔ-ում իրականացվող ՄԿԾ-ները համապատասխանում են տարածաշրջանի աշխատաշուկայի կարիքներին, համահունչ են քոլեջի սահմանած առաքելությանն ու պետական կրթական չափորոշիչներին և ՈԱՇ-ին: Քոլեջը միջին մասնագիտական կրթություն իրականացնելիս առաջնորդվում է ՀՀ ՊԿՁ-ներով ու օրինակելի մոդուլային ծրագրերով: Լինելով տարածաշրջանում բժշկական ոլորտում կրթություն իրականացնող միակ հաստատությունը ապահովում է կադրային պահանջարկը: Ուսանողների զգալի մասն աշխատում են մասնագիտությամբ: Քոլեջը չունի ՄԿԾ սահմանված վերջնարդյունքներ, առաջնորդվում է մոդուլների ակնկալվող արդյունքներով:
Կիրառվում են ուսանողների գիտելիքների, գործնական կարողությունների և հմտությունների ձևավորմանը նպաստող դասավանդման և ուսումնառության մեթոդներ, տրվում են վերլուծական և հետազոտական կարողություններ ձևավորող առաջադրանքներ, կարևորվում է ուսանողների մասնագիտական կլինիկական մտածողության ձևավորումը: Դասավանդման և ուսումնառության մեթոդներն ընտրվում են դասախոսների կողմից՝ անհատական մոտեցմամբ:
Քոլեջի կարևորում է գործնական կարողությունների ձևավորմրումը: Գործնական դասընթացների մեծ մասը, որոշ դասախոսություններ ու բոլոր պրակտիկաներն իրականացվում են գործատուների բազաներում:
ՄԿԾ-ի մշտադիտարկման և արդյունավետության գնահատման գործող հիմնական մեխանիզմներն են դասա պատասխանատուի կողմից իրականացվող հարցումները:
Կրթական ծրագրերի իրականացման համար քոլեջն ապահովված է անհրաժեշտ որակավորում ունեցող դասախոսական կազմով: Գործում է դասախոսների ընտրության քաղաքականություն, որն իրականացվում է մրցութային կարգով: Քոլեջն իրականացնում է կարիքների վերհանում, կարևորում է անձնակազմի համալրումը երիտասարդ մասնագետներով: Ներգրավում է բարձր որակավորում ունեցող պրակտիկ դասավանդողների, ովքեր փոխկապակցում են պրակտիկ ոլորտը ուսումնառության հետ:

Ենթակառուցվածքների և ռեսուրսների շարունակական բարելավումը հանդիսանում է ռազմավարական առանցքային հերթություններից մեկը: Քոլեջն այս ուղղությամբ իրականացրել է մի շարք առաջընթաց քայլեր. շենքային պայմանների բարելավում, ուսումնական ռեսուրսների համալրում: Ձևավորված է համապատասխան ուսումնական և անվտանգ միջավայր, որը համապատասխանեցված է հատուկ կարիքներ ունեցող շահակիցներին:

2. ***Կառավարումն ու որակի ապահովման համակարգը ձևավորման փուլում են, սակայն առկա են զարգացման միտումներ և կառավարումը միտված է որակի բարելավմանը***

Քոլեջը վերանայել և հստակեցրել է իր ռազմավարության մեջ արտահայտվող առաքելությունը, այն համապատասխանեցնելով ներքին ուարտաքին շահակիցների ակնկալիքներին և ՈԱԾ-ի 5-րդ մակարդակին:

ԱՊԲՔ առաքելությունը, նպատակներն ու խնդիրները համապատասխանում են գործող կառավարման համակարգին, առկա ռեսուրսներին, հնարավորություններին և շուկայի պահանջներին: Մուիի կազմակերպական կառուցվածքը հստակ չէ: Ապահովված չէ ստորաբաժանումների միջև հորիզոնական համագործակցությունը, շատ թույլ են ամբիոնների դերակատարությունը և հստակեցված չէ ինստիտուցիոնալ մակարդակում: Պլանավորման փաստաթղթերը և հաշվետվությունները հիմնականում փոխկապակցված չեն քոլեջի ՌԾ-ի գործողությունների իրականացման պլանի հետ:

Քոլեջի փաստաթղթային վարչարարությունը չի իրականացվում որակի ապահովման սկզբունքով:

Հաշվետվությունները և գնահատման մեխանիզմները լիովին չեն նպաստում տվյալահենք որոշումների կայացմանը, առկա չեն գնահատման գործիքակազմի արդյունավետությունը գնահատող մեխանիզմներ: Տեսանելի չէ ՊԻԳԲ շրջափուլը բոլոր գործընթացներում:

Քոլեջի ֆինանսական մուտքերը սահմանափակված են միայն ուսման վարձավճարներով: Բացակայում են ֆինանսական ռեսուրսների և ռազմավարական նպատակների փոխկապակցման մեխանիզմները:

ԱԲՊՔ 2020 թվականից փորձել է ներդնել ՈԱ համակարգ: Ունի որակի ապահովման պատասխանատուի հաստիք, մշակել և ներդրել է ՈԱ գործընթացները կանոնակարգող որոշակի փաստաթղթեր՝ որակի ներքին ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր, սակայն հստակ սահմանված չեն որակի ապահովման կենտրոնի դերակատարումը:: :Որակի ապահովման ամբողջական համակարգ քոլեջում դեռևս ձևավորված չէ: Իրականացված աշխատանքները և հաշվետվությունները հիմնականում չեն համապատասխանում ՈԱ աշխատանքային պլանում ներառված գործողություններին: Առկա չեն իրականացված գործընթացների արդյունավետության գնահատման հիմքեր: Քոլեջը պարբերաբար չի հավաքագրում իր հիմնական ոլորտներին վերաբերող լիարժեք տվյալներ առկա խնդիրների վերհանման համար

Դեռևս սակավ է ներքի և արտաքի շահակիցների իրազեկվածությունն ու ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորորումների արժանահավատ շնորհմանը***:

Քոլեջում գործում են ուսանողների ընդունելության, ընտրության և հավաքագրման հստակ մեխանիզմներ: Ապահովել է դիմորդների կայուն աճ վերջին 5 տարների շրջանում:

Քոլեջում պարբերաբար անցկացվում են ուսանողների կարիքների վեր հանման, ռեսուրսներից բավարարվածության վերաբերյալ հարցումներ:
Ուսանողներն ազատ են վարչական անձնակազմին դիմելու հարցում: Գործում են կարիերային նպաստող որոշակի ծառայություններ, ուսանողները ստանում են համապատասխան խորհրդատվություններ:

ԱՊԲՔ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության մարմին՝ «Ուսանողական խորհուրդ», որն ունի իր սահմանված կանոնադրութուն:

ԱՊԲՔ-ն չունի հետազոտական ուղղության զարգացման համար սահմանված տեսլական, քաղաքականություն: Հետազոտությունը չի դիտարկվում որպես Քոլեջի զարգացման ուղղություն: Չի գնահատվել քոլեջի հետազոտական աշխատանքներ կատարելու մասնագիտական ներուժը: Դասախոսները ներգրավված չեն հետազոտական աշխատանքներում, ուսանողներին տրվող առաջադրանքներում թույլ է հետազոտական/վերլուծական բաղադրիչը:

Քոլեջն ունի հաշվետվողականության որոշակի մեխանիզմներ, հաշվետու է պետական գերատեսչություններին, արտաքին և ներքին շահակիցներին: Ապահովում է իր գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածումն ու թափանցիկությունը: Սակայն կարևոր է ապահովել հաշվետվությունների և ՌԾ կապը, ինչպես նաև հաշվետվությունները դարձնել վերլուծական: Քոլեջն ունի տեղեկատվության հասանելիությունն ու թափանցիկությունն ապահովող հարթակներ, սակայն լիարժեք չի գործում քոլեջի պաշտոնական կայքը: Քոլեջն իրականացնում է հասարակությանը գիտելիքների և արժեքների փոխանցման միջոցառումներ

Քոլեջը չունի արտաքին կապերի խրախուսման քաղաքականություն և սահմանված ընթացակարգեր, համակարգող ստորաբաժանում կամ պատասխանատու անձ, դեռ սահմանափակ է միջազգայնացմանն ուղղված քայլերը: Սակայն ԱՊԲՔ-ն ակտիվ համագործակցում է տեղական կազմակերպությունների հետ: Ստեղծել համագործակցային միջավայր՝ կնքվել են պայմանագրեր տարածաշրջանի բուժհաստատությունների, ատամնաբուժական և կոսմետոլոգիական կենտրոնների, դեղատների, քոլեջների, ՀՀ բուհերի և հասարակական կազմակերպությունների հետ:
Քոլեջը դիմել է Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող «Էրազմուս+» ծրագրին մասնակցում համար: Օտար լեզվի իմացության բարձրացման համար նախատեսվում է պահուստային ժամերի հաշվին ավելացնել օտար լեզվի ժամերը:

4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:
5. Թերությունների վերացման ծրագիրն իրատեսական է և իրականացման դեպքում կբերի որակական դրական փոփոխությունների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. «Արարատի պետական բժշկական քոլեջ ՊՈԱԿ-ին շնորհել ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:

2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Կառավարում ու վարչարարություն», «Հետազոտություն և զարգացում»** և **«Որակի ներքին ապահովման համակարգ»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:

3. **Հատուկ ուշադրություն դարձնել**.
   - ՌԾ-ի և պլան ժամանակացույցի վերանայմանը՝
   - ՌԾ նպատակների համապատասխան արդյունքների գնահատման իրատեսական և չափելի քանակական և որակական ցուցիչներ սահմնմանելու անհրաժեշտությանը,
   - դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների ընտրության, միասնական մոտեցումների ապահովմանը,
   - ՄԿԾ-ների մշտադիտարկման, գնահատման, բարելավման քաղաքականության և ընթացակարգերի մշակման անհրաժեշտությունը,
   - պրակտիկաների ծրագրերի և գիահատման սանդղակների բարելավմանը,
   - ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու գործուն մեխանիզմների ներդրմանը,
   - ներքին շահակիցների լեզվահմացության մակարդակի շարունակական բարելավմանը,
   - Քոլեջում իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման, տվյալների հավաքագրման և վերլուծությունների մեխանիզմների Նպաստել հիմնվելով ՊԻԳԲ շրջափուլի վրա:

4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով քոլեջի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:

5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել **«Արարատի պետական բժշկական քոլեջ»** ՊՈԱԿ-ի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի

նախագահ **Ա. Սաղյան**

2024 թ. ապրիլի 27
ք.Երևան